ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ ԹԻՎ 8

**26.12.2025Թ. ԿՆՔՎԱԾ N «ՉՀ-ԷԱՃԱՊՁԲ-2026/1-1» ԳՆՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳՐՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

ք. Չարենցավան «26» 01 2026թ.

Չարենցավանի համայնքապետարանը, ի դեմս համայնքի ղեկավար Հ. Կ. Շահգալդյանի, որը գործում է կազմակերպության կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ «Գնորդ 1»), մի կողմից, և «ԵՂՎԱՐԴԻ ՆԵԿՏԱՐ» ՍՊԸ-ն, ի դեմս տնօրեն Ռ. Մկրտչյանի, որը գործում է կազմակերպության կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ «Վաճառող»), մյուս կողմից, երկուսը միասին այսուհետև՝ Կողմեր, ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական օրենսդրությամբ, հիմք ընդունելով 26.12.2025թ. կնքված N «ՉՀ-ԷԱՃԱՊՁԲ-2026/1-1» գնման պայմանագրի (այսուհետ՝ Պայմանագիր) 8.1.1-րդ, 8.5-րդ, 8.13-րդ կետերը և այն հանգամանքը, որ փոփոխությունը չի դասվում ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 56-րդ կետով սահմանված արհեստական փոփոխությունների շարքին, կնքեցին սույն համաձայնագիրը հետևյալի մասին:

## 1. ՀԱՄԱՁԱՅՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

Հետագա համագործակցության նպատակով՝ Կողմերը որոշեցին՝

1.1 Սույն համաձայնագրով նախատեսված «Գնորդ 1»-ի իրավունքներն ու պարտականությունները գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով վերապահվում է Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Չարենցավան համայնքի Բջնի գյուղի մսուր մանկապարտեզ համայնքային ոչ առևտրային կազմակերպությանը (այսուհետ՝ «Գնորդ 2»):

1.2 Հաստատել գնման ժամանակացույցը՝ համաձայն կից հավելվածի (Հավելված 1-ը կցվում է):

1.3 Հաստատել ֆինանսական պարտավորությունների կատարման ժամանակացույցը (վճարման ժամանակացույց)՝ համաձայն կից հավելվածի (Հավելված 2-ը կցվում է):

1.4 Ապրանքը համաձայնագրով սահմանված ժամկետում «Վաճառող»-ի կողմից չմատակարարելու դեպքում հրաժարվել ապրանքից, եթե մատակարարման ժամկետները խախտվել են 2 (երկու) օրից ավելի:

1.5 «Վաճառող»-ի կողմից համաձայնագիրը խախտելն էական է համարվում, եթե՝

ա) մատակարարվել է անպատշաճ որակի ապրանք, որը չի կարող փոխարինվել «Գնորդ 2»-ի համար ընդունելի ժամկետում.

բ) ապրանքի մատակարարման ժամկետները խախտվել են 2 (երկու) օրից ավելի:

1.6 Համաձայնագրի գինը կազմում է 658249.67 (վեց հարյուր հիսունութ հազար երկու հարյուր քառասունինը դրամ վաթսունյոթ լումա) ՀՀ դրամ, ներառյալ՝ ԱԱՀ-ն:

Համաձայնագրի գինը ներառում է համաձայնագրի կատարումն ապահովելու նպատակով «Վաճառող»-ի կողմից կատարվելիք բոլոր վճարները (ծախսերը), այդ թվում՝ հարկերը, տուրքերը, փոխադրման, ապահովագրման ծախսերը, պարգևավճարները և ակնկալվող շահույթը:

Ապրանքի մատակարարման գինը կայուն է և «Վաճառող»-ն իրավունք չունի պահանջել ավելացնելու, իսկ «Գնորդ 2»-ը նվազեցնելու այդ գինը:

1.7 «Գնորդ 2»-ն իրեն մատակարարված ապրանքի դիմաց վճարում է ՀՀ դրամով անկանխիկ՝ դրամական միջոցները «Վաճառող»-ի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով: Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձնման-ընդունման արձանագրության հիման վրա՝ համաձայնագրի վճարման ժամանակացույցով նախատեսված ամիսներին, բայց ոչ ուշ, քան մինչև տվյալ տարվա դեկտեմբերի 30-ը:

Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձնման-ընդունման արձանագրության հիման վրա՝ համաձայնագրի վճարման ժամանակացույցով նախատեսված ամիսներին, 5 (հինգ) աշխատանքային օրվա ընթացքում:

1.8 Մատակարարված ապրանքն ընդունվում է «Գնորդ 2»-ի և «Վաճառող»-ի միջև հանձնման-ընդունման արձանագրության ստորագրմամբ: Ապրանքը «Գնորդ 2»-ին հանձնելու փաստը ֆիքսվում է «Գնորդ 2»-ի և «Վաճառող»-ի միջև երկկողմ հաստատված փաստաթղթով՝ նշելով փաստաթղթի կազմման ամսաթիվը:

Մինչև համաձայնագրով ապրանքի մատակարարման համար նախատեսված օրը ներառյալ «Վաճառող»-ը «Գնորդ 2»-ին է տրամադրում իր կողմից ստորագրված՝ ապրանքը «Գնորդ 2»-ին հանձնելու փաստը ֆիքսող փաստաթուղթը (հավելված 3.1) և հանձնման-ընդունման արձանագրության երկու օրինակ (հավելված 3):

1.9 Հանձնման-ընդունման արձանագրությունը ստորագրվում է, եթե մատակարարված ապրանքը համապատասխանում է համաձայնագրի պայմաններին: Հակառակ դեպքում համաձայնագրի կամ դրա մի մասի կատարման արդյունքները չեն ընդունվում, հանձնման-ընդունման արձանագրությունը չի ստորագրվում և «Գնորդ 2»-ը՝

ա) հարցի կարգավորման համար ձեռնարկում է նման իրավիճակի համար համաձայնագրով նախատեսված միջոցները.

բ) «Վաճառող»-ի նկատմամբ կիրառում է պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ:

1.10 «Գնորդ 2»-ը հանձնման-ընդունման արձանագրությունը ստանալու օրվան հաջորդող աշխատանքային օրվանից հաշված տասն աշխատանքային օրվա ընթացքում «Վաճառող»-ին է ներկայացնում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրության մեկ օրինակը կամ ապրանքը չընդունելու պատճառաբանված մերժումը:

1.11 Եթե համաձայնագրի 1.10 կետով սահմանված ժամկետում «Գնորդ 2»-ը չի ընդունում մատակարարված ապրանքը կամ չի մերժում դրա ընդունումը, ապա մատակարարված ապրանքը համարվում է ընդունված և համաձայնագրի 1.10 կետով սահմանված վերջնաժամկետին հաջորդող աշխատանքային օրը «Գնորդ 2»-ը Վաճառողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը:

## 2. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

2.1 Սույն Համաձայնագիրն ուժի մեջ է մտնում Կողմերի ստորագրման պահից և հանդիսանում է Պայմանագրի անբաժանելի մասը:

2.2 Սույն Համաձայնագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են դատական կարգով:

2.3 Սույն Համաձայնագրում Կողմերի չնշված պարտավորությունները թողնվում են անփոփոխ:

2.4 Սույն Համաձայնագիրը և հավելվածները կազմված են 6 (վեց) էջից, կնքվում են հայերեն լեզվով, երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ, յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ:

## 3. ԿՈՂՄԵՐԻ ՀԱՍՑԵՆԵՐԸ, ԲԱՆԿԱՅԻՆ ՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐԸ ԵՎ ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

«ԳՆՈՐԴ 1»
Չարենցավանի
համայնքապետարան
ք. Չարենցավան Կ. Դեմիրճյան
հրապարակ թիվ 1
ՀՀ ՖՆ ԳՎ
Հ/Հ 900132111023
ՀՎՀՀ 03022497

Համայնքի ղեկավար՝
Հ. Կ. Շահգալդյան

____________________
(ստորագրությունը)
Կ.Տ

«ԳՆՈՐԴ 2»
ՀՀ Կոտայքի մարզի
Չարենցավան
համայնքի Բջնի գյուղի
մանկապարտեզ» ՀՈԱԿ
գ. Բջնի 8-րդ [illegible]
«[illegible]» ԲԲԸ
Հ/Հ [illegible]
ՀՎՀՀ 03008679

Տնօրեն՝ [illegible]

____________________
(ստորագրությունը)
Կ.Տ

«ՎԱՃԱՌՈՂ»
«ԵՂՎԱՐԴԻ ՆԵԿՏԱՐ» ՍՊԸ
Կոտայքի մարզ, ք. Եղվարդ,
Սաֆարյան փողոց 15
«ԱՐԱՐԱՏԲԱՆԿ» ԲԲԸ
Հ/Հ 1510017371551598
ՀՎՀՀ 03307946
էլ. հասցեն exvardnektar@mail.ru
հեռ. (+37498) 18-11-11

Տնօրեն՝ Ռ. Մկրտչյան

____________________
(ստորագրությունը)
Կ.Տ

Հավելված N 1
26.12.2025թ. կնքված «ՉՀ-ԷԱՃԱՊՁԲ-2026/1-1» ծածկագրով
պայմանագրում փոփոխություններ կատարելու նպատակով
«26» 01 2026թ. կնքված թիվ 8 համաձայնագրի

# ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ

ՀՀ դրամ

| Ապրանքի | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| հրավերով նախատեսված չափաբաժնի համարը | գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV) | անվանումը | չափման միավորը | միավոր գինը/ՀՀ դրամ | ընդհանուր գինը/ՀՀ դրամ | ընդհանուր քանակը | մատակարարման | | |
| | | | | | | | հասցեն | ենթակա քանակը | ժամկետը |
| 33 | 03222100/501 | Բանան | կգ | 510.63 | 91913.4 | 180 | գ. Բջնի 8-րդ փողոց թիվ 2 | 180 | 2026 թվականի հունվար-դեկտեմբեր ամիսներ |
| 61 | 15112160/501 | Հավի մեռիք, սառեցված | կգ | 1300.12 | 182016.8 | 140 | գ. Բջնի 8-րդ փողոց թիվ 2 | 140 | 2026 թվականի հունվար-դեկտեմբեր ամիսներ |
| 64 | 15511700/501 | Կաթի փոշի | կգ | 2499.99 | 12499.95 | 5 | գ. Բջնի 8-րդ փողոց թիվ 2 | 5 | 2026 թվականի հունվար-դեկտեմբեր ամիսներ |
| 65 | 15542100/501 | Կաթնաշոռ դասական | կգ | 1485 | 44550 | 30 | գ. Բջնի 8-րդ փողոց թիվ 2 | 30 | 2026 թվականի հունվար-դեկտեմբեր ամիսներ |
| 66 | 15512000/501 | Թթվասեր | կգ | 1200 | 144000 | 120 | գ. Բջնի 8-րդ փողոց թիվ 2 | 120 | 2026 թվականի հունվար- |

| | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | | | | | | | | դեկտեմբեր ամիսներ |
| 73 | 03142520/501 | Ձու, 02 կարգ | հատ | 57.96 | 183269.52 | 3162 | գ. Բջնի 8-րդ փողոց թիվ 2 | 3162 | 2026 թվականի հունվար-դեկտեմբեր ամիսներ |

«ԳՆՈՐԴ 1»
Չարենցավանի համայնքապետարան
ք. Չարենցավան Կ. Դեմիրճյան հրապարակ թիվ 1
ՀՀ ՖՆ ԳՎ
Հ/Հ 900132111023
ՀՎՀՀ 03022497
Համայնքի ղեկավար
Հ. Կ. Ծառուկյան

(ստորագրություն)
Կ.Տ

«ԳՆՈՐԴ 2»
ՀՀ Կոտայքի մարզի Չարենցավան համայնքի Բջնի գյուղի մանկապարտեզ ՀՈԱԿ
գ. Բջնի 8-րդ փողոց թիվ 2
«ԱԿԲԱ ԲԱՆԿ» ԲԲԸ
Հ/Հ 220435140052000
ՀՎՀՀ 03008679
Տնօրեն Ա. Աբրահամյան

(ստորագրություն)
Կ.Տ

«ՎԱՃԱՌՈՂ»
«ԵՂՎԱՐԴԻ ՆԵԿՏԱՐ» ՍՊԸ
Կոտայքի մարզ, ք. Եղվարդ, Սաֆարյան փողոց 15
«ԱՐԱՐԱՏԲԱՆԿ» ԲԲԸ
Հ/Հ 1510017371551598
ՀՎՀՀ 03307946
էլ. հասցե exvardnektar@mail.ru
հեռ. (+37498) 18-11-11
Տնօրեն Ռ. Մկրտչյան

(ստորագրություն)
Կ.Տ

Հավելված N 2
26.12.2025թ. կնքված «ՉՀ-ԷԱՃԱՊՁԲ-2026/1-1» ծածկագրով
պայմանագրում փոփոխություններ կատարելու նպատակով
«26» 01 2026թ. կնքված թիվ 8 համաձայնագրի

## ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

ՀՀ դրամ

| հրավերով նախատեսված չափաբաժնի համարը | գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV) | անվանումը | Ապրանքի դիմաց վճարումները նախատեսվում է իրականացնել 2026 թվականին՝ ըստ ամիսների, այդ թվում | | | | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | | հունվար | փետրվար | մարտ | ապրիլ | մայիս | հունիս | հուլիս | օգոստոս | սեպտեմբեր | հոկտեմբեր | նոյեմբեր | դեկտեմբեր | Ընդամենը |
| 33 | 03222100/501 | Բանան | 91913.4 | 91913.4 | 91913.4 | 91913.4 | 91913.4 | 91913.4 | 91913.4 | 91913.4 | 91913.4 | 91913.4 | 91913.4 | 91913.4 | 91913.4 |
| 61 | 15112100/501 | Հավի մսեղիք, սառեցված | 182016.8 | 182016.8 | 182016.8 | 182016.8 | 182016.8 | 182016.8 | 182016.8 | 182016.8 | 182016.8 | 182016.8 | 182016.8 | 182016.8 | 182016.8 |
| 64 | 15511700/501 | Կաթի փոշի | 12499.95 | 12499.95 | 12499.95 | 12499.95 | 12499.95 | 12499.95 | 12499.95 | 12499.95 | 12499.95 | 12499.95 | 12499.95 | 12499.95 | 12499.95 |
| 65 | 15542100/501 | Կաթնաշոռ դասական | 44550 | 44550 | 44550 | 44550 | 44550 | 44550 | 44550 | 44550 | 44550 | 44550 | 44550 | 44550 | 44550 |
| 66 | 15512000/501 | Թթվասեր | 144000 | 144000 | 144000 | 144000 | 144000 | 144000 | 144000 | 144000 | 144000 | 144000 | 144000 | 144000 | 144000 |

| | | | | | | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| 73 | 03142520/501 | Ձու, 02 կարգ | 183269.52 | 183269.52 | 183269.52 | 183269.52 | 183269.52 | 183269.52 | 183269.52 | 183269.52 | 183269.52 | 183269.52 | 183269.52 | 183269.52 | 183269.52 |

*Վճարման ենթակա գումարները ներկայացվում են աճողական կարգով՝ ըստ փաստացի մատակարարված խմբաքանակների:

«ԳՆՈՐԴ 1»
Չարենցավանի
համայնքապետարան
ք. Չարենցավան Կ. Դեմիրճյան
հրապարակ թիվ 1
ՀՀ ՖՆ ԳՎ
Հ/Հ 900132111023
ՀՎՀՀ 03022497

Համայնքի ղեկավար՝
Հ. Կ. Շահգալդյան

(ստորագրությունը)
Կ.Տ

«ԳՆՈՐԴ 2»
ՀՀ Կոտայքի մարզի
Չարենցավան
համայնքի Բջնի գյուղի
մանկապարտեզ ՀՈԱԿ
գ. Բջնի 8-րդ փողոց թիվ 2
«ԱԿԲԱ ԲԱՆԿ» ԲԲԸ
Հ/Հ 220435140052000
ՀՎՀՀ 03008679

Տնօրեն Ռ. Մկոյան

(ստորագրությունը)
Կ.Տ

«ՎԱՃԱՌՈՂ»
«ԵՂՎԱՐԴԻ ՆԵԿՏԱՐ» ՍՊԸ
Կոտայքի մարզ, ք. Եղվարդ,
Սաֆարյան փողոց 15
«ԱՐԱՐԱՏԲԱՆԿ» ԲԲԸ
Հ/Հ 1510017371551598
ՀՎՀՀ 03307946
էլ. հասցեն exvardnektar@mail.ru
հեռ. (+37498) 18-11-11

Տնօրեն Ռ. Մկրտչյան

(ստորագրությունը)
Կ.Տ